# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ.
(094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

N 345
*06 նոյեմբեր 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2020թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 54-Ա,նոյեմբերի 03-ի թիվ 55-Ա, թիվ 56-Ա և նոյեմբերի 05-ի թիվ 57-Ա որոշումները:

Առդիր՝ **4** թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094)-519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 54-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2011թվականի մայիսի 3-ի <<Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին>> N 05-Ն հրամանի՝

***որոշում եմ***

1. Հաստատել Հացավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021թվականին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ ***համաձայն հավելվածի***:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 20թ. հոկտեմբերի 30
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 55-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

***որոշում եմ***

1. 2020թվականի նոյեմբերիմ 05-ին ժամը 11<sup>00</sup>-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով.

   1) Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 33-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   2) Հացավան համայնքի անուրդային հանձնաժողովի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

20 20թ. նոյեմբերի 03
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 56-Ա

ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 68-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

***որոշում եմ***

1. Ստեղծել Հացավան համայնքի վարչական սահմաններում համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործընթացը կազմակերպող և իրականացնող համայնքային աճուրդային հանձնաժողով՝հետևյալ կազմով.
   1) Շավարշ Սարգսյան-համայնքի ղեկավար,աճուրդի կազմակերպիչ
   2) Ալվարդ Խաչատրյան- աշխատակազմի քարտուղար
   3) Անի Կարապետյան-առաջատար մասնագետ
   4) Անուշավան Խաչատրյան-ավագանու անդամ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2020 թ. նոյեմբերի 03
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 57-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը՝

***որոշում եմ***

1. Հացավան համայնքի վարչական տարածքում 2021թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի և Հացավան համայնքի 2021թվականի ՏԱՊ-ի նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2.Հաստատել Հացավան համայնքի վարչական տարածքում 2021թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի և Հացավան համայնքի 2021թվականի ՏԱՊ-ի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների իրավերը՝***համաձայն հավելվածի***:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին՝համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել համայնքի վարչական տարածքում 2021թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի և համայնքի 2021թվականի ՏԱՊ-ի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների իրավերը,ինչպես նաև փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում այն վայրերում որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ավարդ Խաչատրյանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020թ. նոյեմբերի 05
գ.Հացավան